

# ԵՍ ՊԱՏՐԱՍ ԵՍ

Հայաստանի Հանրապետության քաղաքացու  
գործողություններն արտակարգ իրավիճակում  
և ռազմական սպառնալիքի դեպքում

Ուղեցույցը միշտ պահիր ձեռքիդ տակ

## Համապարփակ պաշտպանության և անվտանգության համակարգի նպատակն ու առաքելությունը

Համապարփակ պաշտպանության և անվտանգության համակարգը (ՀՊԱՀ) երկրի  
պաշտպանության և զարգացման հայեցակարգ է, համաձայն որի յուրաքանչյուր ոք պետք  
է պատրաստ լինի արտակարգ իրավիճակի և ուժերը մոբիլիզացնել՝ հանուն  
քաղաքացիական պաշտպանության:

## Ի՞նչ է «Ոգեգներ»

Ոգեգները Հայաստանի Համապարփակ պաշտպանության և անվտանգության  
համակարգի ստեղծմանը նպաստող համակարգ է: Այն իր մեջ ներառում է հանրային,  
պետական և մասնավոր պոտենցիալը՝ նպատակ ունենալով համընդհանուր ներուժով  
նպաստել երկրի դիմակայունության բարձրացմանը:

# ՈՂԵՑՈՅՆԻ ԽՈՍՔ

Այս գրքույկը նախատեսված է հենց քեզ համար, որպեսզի արտակարգ իրավիճակի դեպքում (տարրերային, տեխնոլոգիական, քիմիական, կենսաբանական, ճառագայթային, միջուկային և այլ աղետներ) կարողանաս ճիշտ կողմնորոշվել, նախ ինքդ քեզ օգնես, ապա հարկ եղած դեպքում նաև ամառչին օգնություն ցույց տաս մտերիմներիդ:

Այս ուղեցույցի մեջ հավաքել ենք պարզ, օգտակար ու կիրառելի խորհուրդ-քայլեր, որոնց շնորհիվ, ամենակարևորը, կարող ես ամանց խուճապի մատնվելու՝ պատրաստվել ճգնաժամային ցանկացած իրավիճակի, ինչպես նաև դրանք հաղթահարել նվազագույն վնասով:

Մի կարևոր խորհուրդ էլ: Արտակարգ իրավիճակների ժամանակ պետք է նաև գործակցել պետության հետ՝ քո և հարազատներիդ անվտանգությունն ապահովելու նպատակով:

Այս ուղեցույցի մեջ մենք ներառել ենք

- ապաստարանը կահավորելու անհրաժեշտ պարագաների ցանկը
- ամառչին անհրաժեշտության իրերի և սննդի պաշարների ցանկը
- ինչ քայլեր ձեռնարկել, երբ հնչում է օդային տագնապի ազդանշանը
- ամառչին օգնության քայլերի հերթականությունը
- տարհանման դեպքում հստակ կանոնների ցանկը

Պահի՛ր գրքույկը ձեռքիդ տակ կամ աչքիդ ամառ. այն ամենաարտառոց ու անսովոր իրավիճակների ժամանակ կարող է դառնալ անհատական պաշտպանության քո ուղեցույցը, քո գլխավոր կողմնորոշիչը:

Կյանքը ոչ միշտ է ընթանում այնպես, ինչպես մենք պլանավորել ենք:

Այսօրվա անկանխատեսելի պայմաններում տարածաշրջանին մշտապես սպառնում են ռազմական ընդհարումներ և պատերազմներ:

Այլ արտակարգ իրավիճակներն ու տեղանքին հատուկ հավանական բնական աղետները ևս սպառնալիքներ են, որոնք կարող են կտրուկ փոխել մեր առօրյան:

Փաստ է, որ պատրաստված լինելը զգալիորեն հեշտացնում է քաղաքացու կյանքը.

արտակարգ իրավիճակների գործուն պլաններ և լավ տեղեկացված բնակիչներ ունեցող համայնքներն ավելի արդյունավետ են միմյանց աջակցում, ռեսուրս բաշխում և

ճգնաժամից հետո արագ վերականգնվում:

# ՉՈՒՒՆ 1. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ ԵՎ ՊԱՏԵՐԱԳՄԱԿԱՆ ՊՈՐԾՈՂՈՒՅՈՒՆՆԵՐ



## Պատրաստ ես արտակարգ իրավիճակի

Ճգնաժամային իրավիճակը (պատերազմ, համաճարակ, հրդեհ, սողանք) թուպեների ընթացքում խաթարում է քո սովորական առօրյան, կյանքն էլ վերածվում է քառսի, քանի որ



հնարավոր չէ ջեռուցել բնակարանը/տունը/ապաստարանը



չգիտես որտեղ պատրաստել և պահել սնունդը



խանութում սպառվում են առաջին անհրաժեշտության մթերքներն ու ապրանքները



դադարեցվում է ջրամատակարարումը



վառելիքը բավարար չէ



դեղորայքը չի հերիքում



չեն աշխատում բանկերն ու բանկոմատները



չկա ինտերնետ և բջջային կապ



չի գործում հասարակական տրանսպորտը

Իհարկե, այս խնդիրներն ամբողջությամբ նախապես հնարավոր չէ լուծել, քանի որ հանրային ծառայություններն այդ ընթացքում պարզապես պարալիզացվում են: Բայց եթե տեղեկացված ես, կարող ես առանց սթրեսի ու վնասի հաղթահարել արտակարգ իրավիճակներից առաջացած անհարմարություններն ու հետևանքները: Ինչպե՞ս, իհարկե այս ուղեցույցի շնորհիվ. քո քայլերը հերթով գրի ենք ամել այստեղ: Դե՛, հետևիր մեզ, մի շնչով ենք ավարտելու ուղեցույցը:



## Ճգնաժամային իրավիճակի դեպքում պետությունը նախ և առաջ հումանիտար օգնությունն ուղղում է սոցիալական առավել խոցելի խմբերին՝ տարեցների, հաշմանդամներին, երեխաներին:

Հետևաբար, դու ինքդ պետք է պատրաստ լինես ցանկացած ճգնաժամի: Դրա համար պետք է լինել իրազեկված:



## Միայն տեղեկացված մարդն է պաշտպանված և ի վիճակի օգնել նաև իր շրջապատի կարիքավոր խմբերին:

Կարևոր է՝ արտառոց իրադրության ժամանակ ունենալ երկշաբաթյա ջրի, սննդի պաշար ու մտածել ջերմության, կապի աղբյուրի մասին: Կենսական անհրաժեշտ միջոցների և պայմանների վերաբերյալ առանձնացրել ենք համառոտ ցանկ, այն կարող եք ընթերցել 16-րդ էջում:

Մի սպասիր մինչև արտասովոր դրության մեջ կհայտնվես, նախապես գնևիր միջավայրդ ու պարզիր՝ ինչ հնարավոր վտանգներ կան Ձեր բնակության վայրում (սողանքային գոտի, պայթյունավտանգ կառույց, վտանգավոր ու թունավոր նյութերի արտադրամաս, սահմանամերձ համայնք):



## Պատրաստ ես ապատեղեկատվության դեմ պայքարին

Հակառակորդ պետությունների ապատեղեկատվությունն ու կեղծ լուրերը դառնում են հզոր գործիք, որոնց միջոցով կարողանում են ազդել մեր իսկ որոշումների և հասարակության հավասարակշռության վրա: Կեղծ լուրերի թակարդում կհայտնվես, եթե մեղիագրագետ չես: Ահա թե ինչ ենք առաջարկում. մինչև որևէ լուր կհավանես ու կտարածես, ինքդ քեզ ուղղիր մի քանի պարզ հարց՝



- փա՞ստ է, թե՞ կարծիք
- ի՞նչ նպատակ ունի այդ տեղեկությունը
- ո՞վ է տարածել
- աղբյուրը հավաստի՞ է
- լուրը որևէ այլ ՁԼՄ հրապարակե՞լ է



## Միայն իրազեկ քաղաքացին կարող է տարբերակել հավաստի լուրը ապատեղեկատվությունից ու թշնամու թաքնված քարոզչությունից:

Այնպես որ, հեռու՝ ասեկոսներից: Ստուգի՛ր լուրը վստահելի մի քանի աղբյուրից և մի՛ տարածիր դեռ չճշտված տեղեկությունը: Մի՛ տարածիր նաև այն դեպքում, երբ վստահ չես՝ ինչ հետևանք դա կարող է ունենալ:



## ԶՈՒՇԱՑԵ՛Ք





Մի՛ տրամադրիր անձնական տվյալներ անձանոթ մարդկանց և օգտատերերին: Մի՛ տարածիր ռազմական նշանակության տեղեկություն:



### Պատրաստ ես դիմակայել Հայաստանի վրա հարձակմանը



Հարձակումները լինում են՝

-  ահաբեկչական
-  ռազմական
-  թվային
-  տարածքային

Հարձակումները կարող են իրականացվել օդային, հրանոթային և այլ տարբերակներով: Իսկ ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկել, երբ հարձակում է գրանցվել:

Նախապես քո համայնքապետարանից ճշտիր մտակա ապաստարանի վայրը: Կահավորիր այն անհրաժեշտ պարագաներով (ցանկը՝ էջ 12): Եթե մտակայքում չկա ապաստարան, հարկավոր է պարզել՝ հարևանությամբ գտնվող որ շենքն ունի նկուղ կամ Ձեզ մետրոյի որ կայարանն է ավելի մոտ:



# **+** ԱՄԱԶԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Սովորի՛ր կամ բարելավի՛ր առաջին օգնության հմտությունները: Կարող ես օգտվել բջջային ԱԲՕ հավելվածից:



## **Պատրաստ ես պատերազմական գործողությունների**

Պատերազմական գործողությունների սրացման կամ արտակարգ իրավիճակի ժամանակ



բնակավայրից կամ աշխատավայրից հեռանալ միայն խիստ անհրաժեշտության դեպքում,



կրակոցների և ռազմական գործողությունների ընթացքում մի՛ մոտեցիր պատուհաններին,



տանից դուրս գալիս վերցրու անձը հաստատող փաստաթուղթ, որի մեջ կարելի է ավելացնել արյան կարգի և բժշկական այլ ինդիկսների վերաբերյալ թերթիկը,

մի՛ շփվիր զինված մարդկանց հետ, մի՛ կրիր զինվորական հանդերձանք: Հագի՛ր մուգ, աչքի չընկնող հագուստ,



տանեցիների համար առանձնացրու տազևապի պայուսակ (իրերի ցանկը կարող ես գտնել 13-րդ էջում):






Պատրաստ քաղաքացին տիրապետում է զենքի անվտանգության և ինքնապաշտպանության կանոններին, գիտի ինչ անել յուրաքանչյուր տիպի զենքի հարձակման դեպքում:

# ԱԿՏՈՍԱՏԱՅԻՆ ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ԺԱՍՆԱԿ



- բաց տարածքում գտնվելիս պառկիր գետնին և ձեռքերով ծածկիր գլուխդ: Հավելյալ պատնեշ կարող է հանդիսանալ ցանկացած պատ, բետոնե կամ աղբի կույտ: Խորհուրդ չի տրվում թաքնվել մեքենաների կամ կրպակների մոտ, քանի որ հենց դրանք են առաջինը թիրախավորում,
- փակ տարածքում գտնվելիս՝ տեղափոխվիր առավել անվտանգ հատված, օրինակ՝ լոգասենյակ կամ հենց լոգարան: Եթե դա հնարավոր չէ, ապա պառկիր գետնին և շրջապատի քեզ այն իրերով, որոնք կպաշտպանեն բեկորից և փամփուռտից: Կրակոցներից անմիջապես հետո մի՛ տե- առնվազն 5 րոպե: Կրակոցներից դաշարժվիր, սպասի՛ր



# ՏԱՆԿԻ, ԱՎԱՆԱՆԵՏԻ, ԻՆՔՆԱԹԻՈՒ ՈՍԲԿՈՇՈՒԹՅԱՆ ԺԱՍՆԱԿ




- մուտքերը, կամարները, աստիճանավանդակներն այս իրավիճակում չեն օգնի: Խուսափի՛ր բարակ պատերից: Պատասպարվելու միակ անվտանգ տարբերակը ապաստարանն է



- բաց տարածքում գտնվելիս՝ պառկիր գետնին, ձեռքերով ծածկիր գլուխդ և բաց պահիր բերանդ՝ ցնցակաթվածից և գիտակցության կորստից խուսափելու համար: Ապահով տարբերակ է փոսը:

# «ԳՐՎԴ» ՏԵՍԱԿԻ ԳՆԵՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ



**Կարող ես ընտանիքի կամ համայնքի անդամներով սահմանել հերթափոխ և ինքնուրույն իրականացնել մշտադիտարկում ռմբակոծման վայրում**



• կրակոցը լսելուն պես թաքնվիր մոտակա նկուղում կամ ցանկացած այլ խորշում: Ավելի ապահով է պատսպարվել շինության երկու հիմնական պատերի անկյունում,



• աշխատիր մնալ պատուհանների կամ դռների մոտ, որպեսզի շենքի վնասման դեպքում կարողանաս անարգել լքել թաքստոցը,




• ռմբակոծությունից հետո տարածքը լքիր գոնե 10 րոպե անց:




Պատրաստ քաղաքացին ունի պատշաճ կահավորված ապաստարան՝ հագեցած անհրաժեշտ պարագաներով և պարենով:



## ՈՍԲԱԿՈՇՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ ՉՏՆՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ



- դադարեցրու մեքենայի ընթացքը, դուրս արի փոխադրամիջոցից և թաքնվիր դաշտում, անտառում կամ շինարարական որևէ տարածքում, պռակիր գետնին, ձեռքերով ծածկիր գլուխդ,
- եթե փոխադրամիջոցը չես կարող լքել, ապա պատսպարվիր պատուհանների մակարդակից մի քիչ ներքև: Նույն քայլերը կատարել նաև հասարակական տրանսպորտում գտնվելու դեպքում:





## ՉԼՈՒՒ 2. ԱՊԱՏՏԱՐԱՆ. ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆ ՈՒ ՏԵՄԱԿՆԵՐԸ



### Ապաստարան են համարվում՝

Յուրաքանչյուր մարդ պետք է իմանա՝ որտեղ է գտնվում հենց իր ու իր ընտանիքի համար նախատեսված ապաստարանը և բարեկարգի այն: Եթե դեռ չգիտես, ապա հենց հիմա ճշտիր քո ապաստարանի վայրը

- ✓ համատիրությունից
- ✓ գյուղապետարանից
- ✓ քաղաքապետարանից
- ✓ համայնքապետարանից



### Ապաստարան են համարվում՝

- ✓ շենքերի և շինությունների նկուղները կամ առաջին հարկերը
- ✓ ստորգետնյա շինությունները
- ✓ խորշերը, անձավները, հանքախորշերը
- ✓ ստորգետնյա անցումները
- ✓ մետրոպոլիտենի կայարանները



### Ապաստարանը պետք է՝



լինի ռազմավարական թիրախ-օբյեկտներից հեռու



չլինի լրացուցիչ կամ երկրորդային խոցման վայր\*



ունենա պաշտպանական թաքստոց



ունենա երկու ելք

\* ջրերը չողողեն, փլուզումների հետևանքով ելքերը չփակվեն



առաջին անհրաժեշտության դեղամիջոց,  
վիրակապական նյութեր



դիմակ



աթոռ, մահճակալ



սննդամթերք, ջուր



տաք ծածկոց



## ԱՊՍԱՏԱՐԱՆ ՊԵՏՔ Է ՏԱՆԵԼ



կապի միջոց (հեռախոս,  
հեռուստացույց,  
ռադիո և այլն)



խաղ-խաղալիք երեխաների համար



լապտեր, մոմ, սպիրտայրոց,  
լուցկի, նավթավառ



## ԳԳՈՒՇԱՅԻՐ

Մի՛ տեսանկարահանիր ապաստարանի կամ թաքստոցի տարածքը.  
սմարթֆոնի միջոցով միանգամից հնարավոր է տեղորոշել ձեր հասցեն:



Տան ամենատեսանելի ու հասանելի մի վայրում դիր առաջին անհրաժեշտության իրերով լի քո պայուսակը, որտեղ պետք է լինի՝



անձը հաստատող փաստաթուղթ



չոր սնունդ



ընտանիքի անդամների օգտագործվող դեղորայք



հիգիենայի միջոցներ



լապտեր, մարտկոց




գումար



## ՄՈԱԶԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՈՒՍԱԿ



տաք հագուստ



անհատական պաշտպանության միջոցներ



առաջին օգնության պարագաներ




Պատրաստ քաղաքացին ունի արդի տազնապի պայուսակ, որը ժամանակ առ ժամանակ թարմացվում է:



# ԻՆՉՈՒ ԵՎ ԵՐԲ Է ՀՆԳՈՒՄ ՏԱՂԱՆՊԻ ԱԳՂԱՆՇԱՆԸ

Պատրաստ քաղաքացին կարողանում է տարբերել տաղևապային ազդանշանները, գիտի ինչ անել դրանցից յուրաքանչյուրի պարագայում:

Արտակարգ իրավիճակների ժամանակ արձակվում է ազդանշան, որը հնչում է Էլեկտրաշչակով, բարձրախոսով, հեռուստատեսությամբ, համացանցով: Ազդարարման տեսակները լինում են երկու տեսակ.

 «Օդային տաղևապ» *(լսել)*

 «Ուշադրություն բոլորին» *(լսել)*

«**Օդային տաղևապ**» տրվում է օդային հարձակման ժամանակ՝ Էլեկտրաշչակների միջոցով: Ձայնային ազդանշանը տևում է 2-ից 3 րոպե, միաժամանակ բարձրախոսով հնչում է. «Օդային տաղևապ. պատասպարվել պաշտպանական կառույցներում» բովանդակությամբ զգուշացումը:

«**Ուշադրություն բոլորին**» ազդանշանը հնչում է արտակարգ իրավիճակի, ՀՀ-ի վրա զինված հարձակման և դրա անմիջական վտանգի առկայության, օդային հարձակման ավարտի ժամանակ:



## Օդային տաղևապի ժամանակ տանը գտնվելիս



անջատիր գազի, Էլեկտրաէներգիայի աղբյուրները



փակիր ջրի ծորակը



հագնվիր ու հագրու երեխաներին ու ծերերին



վերցրու անձը հաստատող փաստաթուղթ



մի մոռացիր առաջին անհրաժեշտության իրերի պայուսակը



արագ ու առանց խուճապի պատասպարվիր ձեր ապաստարանում



## ՏԱՐՎԱՆՍԱՆ ՊԼԱՆ

Արտակարգ իրավիճակի ժամանակ վտանգավոր տարածքներից մարդկանց, կենդանիների, նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումն ու տեղաբաշխումը պետք է կատարել դեպի անվտանգ տարածք: Կարգը սահմանում է Հայաստանի կառավարությունը: Բնակչությունը վտանգավոր տարածքից կարող է նաև տարհանվել կազմակերպված հետիոտն շարասյունով: Տարհանումը լինում է 2 տեսակ՝ ընդհանուր և մասնակի:

Ընդհանուրի դեպքում իրականացվում է ամբողջ բնակչության տարհանում: Մասնակիի ժամանակ նախ պետք է տարհանել



երեխաներին



ծերերին



հղիներին



մանկահասակ երեխա ունեցող ծնողներին



հաշմանդամություն ունեցող մարդկանց

Պատրաստ քաղաքացին գիտի տարհանման պլանը և ժամանակ առ ժամանակ անցնում է վերապատրաստում, որ թարմ պահի գիտելիքները:

### ՉԼՈՒՒՆ 3. ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

## ԻՆՉՊԵՏ ՆԱԽԱՊԱՏՐԱՏՎԵԼ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ

Յուրաքանչյուր ընտանիքի կարիքները և բնակության վայրը տարբեր են. կան ընդհանուր խորհուրդներ, որ բոլորին էլ կօգնեն նախապատրաստվել արտակարգ իրավիճակին: Տանն անհրաժեշտ է ունենալ՝

- ապակե և պլաստիկ շիշ
- կափարիչով դույլ
- ջրի պահպանման համար մեծ տարա
- բրդյա հագուստ
- տաք և հարմարավետ բանկոն
- գլխարկ, ձեռնոց և շարՖ
- բարձ
- քնապարկ
- մոմ
- սպիրտայրոց
- լուցկի, կրակայրիչ
- լապտեր
- մարտկոցով ռադիոընդունիչ
- լրացուցիչ մարտկոց
- անհրաժեշտ հեռախոսահամարները՝ թղթին գրված-տպված
- շարժական լիցքավորող սարքեր (power banks)
- USB լարեր
- ջեռուցման այլընտրանքային տարբերակ (նավթայրիչ)
- վառելանյութ
- կանխիկ գումար՝ մանր թղթադրամներով
- փաստաթղթերն իրենց պատճեններով, բանկային ռեկվիզիտներ
- դեղորայք
- անձեռոցիկ
- ախտահանիչ նյութեր
- տակդիրներ

Տանն առանձնացրու երկու շաբաթվա համար նախատեսված ջուր և սնունդ, ներառյալ՝

- ջրի պաշար
- ջրի քիչ չափաբաժնով կամ առանց պատրաստման սնունդ (կարտոֆիլ, կաղամբ, գագար, ձու), ընդեղեն, շոկոլադե, վարսակի և սևնդարար բատոն, պահածո
- քիչ ար պարունակող սնունդ
- պահպանման երկար ժամկետ ունեցող հաց, չորահաց, թխվածքաբլիթ, հալած պանիր, կարագ, կաթի փոշի, բուսայուղ, պինդ տեսակի պանիր, արագ պատրաստման սնունդ (լապշա, վարսակի շիլա)
- պահածո (լոլիկի, մսի, ձկան)




**Եթե պետքարանը չի աշխատում, ապա կարելի է գուգարանակոնքի մեջ տեղադրել պլաստիկ ամուր տոպրակ:**



## **Ուշադրութուն**

Առանձնահատուկ ուշադրություն դարձրու ձեռքերի հիգիենային՝ վարակներից խուսափելու համար:



### ՉԼՈՒԽ 3. ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ԻՆՉՊԵՏ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ

Սովորի՛ր պաշտպանվել և պաշտպանել հարազատներիդ, տիրապետի՛ր առաջին օգնության կանոններին, գիտակցի՛ր, քո գիտելիքներով կարող ես կյանքեր փրկել:



Մեր խորհուրդը քեզ՝ դարձի՛ր կամավոր: Ամուր պետականություն ունեցող երկրներում կամավորությունը մշակույթ է: Կամավորության միջոցով դու քո ներդրումն ես ունենում պետականաշինության գործում: Հիշի՛ր՝ քո մասնակցությունը կարևոր է:

Տարածի՛ր այս ուղեցույցը քո ընկերների, ընտանիքի և համայնքի անդամների շրջանում:



**Եթե առաջինն ես հայտնվել դեպքի վայրում, ապա գանգահարի 911 հեռախոսահամարով:**



ԵՍ  
ՊԱՏՐԱՍ  
ԵՍ



Այս ուղեցույցը պատրաստվել է 92EL մեդիա միավորման նախաձեռնությամբ և ԱԻԹ (ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԻՍ) համատեղ ջանքերով:



Հաստատված է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի կողմից



**ՀԱՆԳԱԿ**  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Տպագրության գիլավոր գործընկեր  
«Հանգակ» հրատարակչություն

## ՎԵՐԶԱՐԱՆ

Խաղաղ, բարեկեցիկ ու երջանիկ կյանքի ձգտում ենք բոլորս: Անվտանգությունն է այն հիմքը, որի վրա հնարավոր է կառուցել մեր երազած կյանքը: Մեր սեփական և մեր ընտանիքի անվտանգության պատասխանատուն առաջին հերթին մենք ենք:

Սովորելով անվտանգության կանոնները և դրանք ճիշտ կիրառելով՝ մենք պաշտպանում ենք մեզ և ամուր ենք պահում զինվորի թիկունքը: Տարրական կանոններ չիմանալով՝ մենք կվտանգենք ինչպես մեր, այնպես էլ մեր մտերիմների կյանքը:

Արտակարգ իրավիճակի ժամանակ մեր գործողությունների հստակ հաջորդականությունը կօգնի ոչ միայն խուճապի չմատնվել, այլև կազմակերպել քո և հարազատներիդ անվտանգությունը:

